

յիշատակուին բոլոր նահատակները եւ ի Քրիստոս ննջեցեալները:

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ ԵՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Խոստովանանքը նախապայման է Աբ. Հաղորդութիւն ստանալու համար: Նոյնիսկ ծոմապահութիւնը անհրաժեշտ է: Երբ «Քրիստոս պատարագեալ» հոգեզմայլ երգը կ'երգուի, հաւատացեալները կը հրաւիրուին «ճաշակելու» Քրիստոսի մարմինն ու արիւնը՝ սրբագործուած հացի եւ գինիի կերպարանքին տակ, որ այլեւս բաժակին մէջ միանալով մէկ եւ անբաժանելի Սարմինը կը գոյացնեն մեր Տիրոջ: Սաքուր հոգիով եւ հաւատքով ներկայանալու են հաւատացեալները Աբ. Հաղորդութեան: Առօրեայ զգեստներէն դուրս՝ կիրակնօրեայ պատշաճ հագուստներ անհրաժեշտ են բոլորին կողմէ՝ յարգանք մատուցանելու համար Աբ. Խորհուրդին, մինչ կանայք պէտք է ծածկեն իրենց գլուխները եւ նուազագոյն շպարով մօտենան Սկիհին: Խաչակնքելով Աբ. Հաղորդութենէն մասունք մը իր լեզուին վրայ ստանալով քահանային ձեռքէն, հաւատացեալը Քրիստոս կ'ընդունի իր մէջ եւ հաղորդակից կ'ըլլայ Անոր երկիւղածութեամբ եւ խոր հաւատքով:

ԱՐՁԱՎՈՒՄ

Պատարագի աւարտին, պատարագիչ քահանան Աբ. խորանէն վար կ'իջնէ Աւետարանը ձեռքին: Կը կարդայ Աւետարանէն հատուած մը, եւ կ'արծակէ ժողովուրդը խաղաղութեամբ երթալու իրենց տունները:

ԱԲ. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ



ԱԲ. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ի՞ՆՉ ԿՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Եկեղեցւոյ եօթը Խորհուրդները Աբ. Հոգիի շնորհները (պարգեւները) կը բաշխեն հաւատացեալներուն: Անոնք «տեսանելի» միջոցներն են աստուածային «անտեսանելի» ներկայութիւնն ու զօրութիւնը բերելու հաւատացեալներու կեանքին մէջ, որքան ատեն որ այդ Խորհուրդները Քրիստոսի կողմէ հաստատուած արարքներ են ու կը կատարուին իր իսկ ձեռքով: Այդ պատճառով անոնք սուրբ են: Խորհուրդները արարողութիւններ չեն, այլ Քրիստոսով գործուած միջոցներ՝ համաձայն իր հրահանգներուն: Խորհուրդները կը կատարուին ձեռնադրեալ եւ օծեալ պաշտօնեաներու ձեռքով միայն:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԷՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցի մը առանց Խորհուրդներու կը մնայ անգործօն եւ ապարդիւն: Ըսողներ կան թէ Աբ. Գիրքին քարոզութիւնն ու զայն կեանքի վերածելը բաւական է քրիստոնեային համար, եւ թէ Խորհուրդները աւելորդ կը մնան Աբ. Գիրքին կողքին: Սակայն անոնք կը մոռնան որ Խորհուրդները ծնունդն են նոյն Աբ. Գիրքին եւ հաստատուած Տիրոջ Յիսուսի Քրիստոսի հրահանգով:

Ի՞ՆՉ Է ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Հաղորդութիւնը քրիստոնեայ անհատը կը մօտեցնէ Քրիստոսի ու Անոր հետ հաղորդակից կը դարձնէ ճիշտ այնպէս՝ ինչպէս Յիսուս հաստատեց զայն իր Վերջին Ընթրիքին՝ 12 աշակերտներուն հետ միասին: Աբ. Հաղորդութիւնը լուրջ եւ հոգեւոր պատրաստութիւն կը պահանջէ, թէ՛ հացն ու գինին պատրաստելով եւ թէ՛ հոգեւորապէս պատրաստելով քրիստոնեայ հաւատացեալները, որոնք արժանի պիտի ըլլան ընդունելու Քրիստոսի Սարմինն ու Արիւնը Աբ. Պատարագի մատուցումի աւարտին: Աբ. Պատարագը կրկնութիւնն է Վերջին Ընթրիքին՝ Խաչէն դէպի Աբ. Խորան փոխադրելով Քրիստոսի Անձին զոհաբերումը:

Հաղորդութիւնը քրիստոնեայ անհատը կը ծօղեցնէ Քրիստոսի...

Ի՞ՆՉ ԿՐ ՆՇԱՆԱԿԷ ԱԲ. ՊԱՏԱՐԱԳ

Աբ. Պատարագ կը նշանակէ զոհագործութիւն Քրիստոսի խաչելութեամբ եւ մահով իրագործուած: Որքան ատեն որ Աբ. Խորանին վրայ Աբ. Պատարագ կը մատուցանենք, Աբ. Սեղանը Յիսուսի մահուան Խաչը կը փոխարինէ եւ անոր քարոզութիւնն ու զոհագործութիւնն է որ կը յիշատակենք: Աբ. Պատարագը խաչելութեամբ կը սկսի եւ կը յանգի Աբ. Յարութեան աստուածային վերջնական յաղթանակին:



ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Սբ. Պատարագի պատրաստութիւնը պատարագիչ քահանայէն կը սկսի, որուն կը յաջորդէ սպասներու, այսինքն հացին ու գինիին պատրաստութիւնը, ճշմարտապէս հետեւելով Յիսուսի խօսքերուն եւ հրահանգներուն, որոնց համաձայն՝ Վերջին Ընթրիքին Յիսուս օրհնեց հացը եւ բաժնեց աշակերտներուն, որպէսզի ուտեն զայն որպէս իր «Մարմինը», եւ ապա օրհնեց գինիին բաժակը ու տուաւ անոնց, որպէսզի խմեն անկէ՝ որպէս իր «Արիւնը»:

ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՅԱՆԱԿ

Քահանան նախ ինքն է որ պիտի պատրաստէ ինքզինքը՝ արտաքինով եւ հոգեւորապէս: Քահանան պատահական կերպով ու վերջին ժամուն չէ որ պիտի գիտնայ պատարագելու իր պարտքը, այլ լրջօրէն՝ գիտակ իր կատարելիք սրբագործումին, պիտի պատրաստուի հաւատքով եւ դիտաւորութեամբ, ու ապա պիտի զգեստաւորուի յատուկ աղօթքով ու ներկայանայ հաւատացեալներուն՝ իր մեղքերէն թողութիւն խնդրելով: Պատարագի ծիսական յատուկ զգեստներու եօթը մասերը առանձին աղօթքներով կը հագուի եւ հանդիսաւորապէս դաս կ'առաջնորդուի, կը լուայ իր ձեռքերը որպէս մաքրութեան նշան, կը խոստովանի իր մեղքերը, թողութիւն կը ստանայ ներկայ եղող քահանայէն ու կը բարձրանայ Սբ. Խորան:

ՆՇԽԱՐՆ ՈՒ ԳԻՆԻՆ

Բեմ բարձրանալով պատարագիչ քահանան, վարագոյրով ծածկուած խորանի ետին կը պատրաստէ Սբ. Հաղորդութեան սպասները՝ հացն ու գինին, որոնք պատրաստ կ'ըլլան փոքրիկ ափսէի մը մէջ: Խունկով եւ աղօթքով կ'օրհնէ զանոնք առանձին ու կը զետեղէ սկիհին մէջ, նշխարը մաղզմային (սկիհին բերանը գոց պահող ափսէին) վրայ, իսկ գինին՝ բաժակին մէջ: Օրհնուած սկիհը ծածկուելով սարկաւագին ձեռքով կը փոխադրուի կողմնակի խորանին վրայ, ուր երկու վառած մոմերու միջեւ կը հանգչի: Ի նշան 12 Առաքեալներուն, 12 մոմեր կը վառին խորանի աստիճաններուն վրայ, Խաչին եւ Աւետարանին շուրջ, եւ լուսաւորուած խորանը կը բացուի, երբ քահանան թափօրով կը շրջի եկեղեցւոյ մէջ, խնկարկելով իւրաքանչիւր հաւատացեալի՝ օրհնելով զանոնք իր ձախ ձեռքի խաչով ու զանոնք յիշելով անմահ Գառն Աստուծոյ Քրիստոսի առջեւ:

ՃԱՇՈՒ ԺԱՍ - ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Սբ. Սեղան վերադառնալով՝ պատարագիչ քահանան Սբ. Երրորդութեան անունով «օրհնուած» կը յայտարարէ Աստուծոյ Թագաւորութիւնը, որմէ ետք կը տրուի ազդանշանը Աստուածաշունչի ընթերցումներուն եւ Նիկիական Հաւատքի դաւանանքի միաձայն արտասանութեան: Աստուծոյ խօսքը եւ օրուան քարոզը կը կազմեն հոգեւոր ուսուցումը, որպէսզի հաւատացեալները իրապէս պատրաստ ըլլան մաս-

նակից դառնալու Սբ. Ձոհագործութեան, այսինքն Սբ. Պատարագին:

ՍԲ. ՊԱՏԱՐԱԳԸ - ԶՈՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Պատրաստութեան եւ ուսուցումի քայլերէն ետք՝ Սբ. Պատարագի կեդրոնական եւ կարեւորագոյն մասը կը հասնի, որ զոհագործութիւնն է: Այդ պահուն, կողմնակի խորանէն սարկաւագին ձեռքով սկիհը Սբ. Սեղան կը բերուի հանդիսաւորութեամբ եւ երկիւղածութեամբ ու կը յանձնուի պատարագիչ քահանային: Քահանան իսկոյն իր ձեռքերը անգամ մը եւս լուալով կը պատրաստուի սրբագործման:

ՈՂՋՈՅՆԻ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՀԱՄԲՈՅՐԸ

Անմիջապէս «Ողջոյն»ի պահը կը յայտարարուի սարկաւագին կողմէ, որ համբուրելով Սբ. Սեղանն ու կիսաբաց սկիհին առջեւ ձեռնամած ձեռքերը պատարագիչ հօր, կը ստանայ ողջոյնը Քրիստոսի յայտնութեան, ու կ'իջնէ դաս եւ ատեանէն կը բաշխէ իր ստացած ողջոյնը մէկ առ մէկ ամէն հաւատացեալի՝ յայտարարելով թէ «Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ», ստանալով հաւատակիցին պատասխանը՝ սիրոյ համբոյրով, թէ «Քրիստոսի յայտնութիւնը օրհնեալ ըլլայ»: Սրբութեան համբոյրը եկեղեցւոյ խաղաղութիւնն ու միութիւնը կը վերահաստատէ ներկայ եւ բացակայ հաւատացեալներուն միջեւ:

ՍԲ. ՀՈԳԻՒ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

Սկիհին մէջ գտնուող հացն ու գինին Սբ. Հոգիի միջնորդութեամբ միայն պիտի

կարենան վերածուիլ Քրիստոսի ճշմարիտ Մարմինին եւ Արիւնին, որուն համար քահանան կ'ոգեկոչէ, կը կանչէ Սբ. Հոգին որ գայ, իջնէ եւ սրբագործէ զանոնք: Սբ. Երրորդութեան երեք Անձերուն ուղղուած հոգեւոր երգեր կ'երգուին, եւ երկրորդ երգի ընթացքին, որ ուղղուած է խաչին վրայ զոհուած Աստուծոյ Որդիին՝ Յիսուսի, քահանան Ամենասուրբ Հոգիին անունով կը սրբագործէ նախ հացը, ապա գինին, եւ վերջին անգամ մըն ալ երկուքը միասին, որմէ ետք՝ անոնք խորհրդաւոր կերպով եւ Սբ. Հոգիի զօրութեամբ կը վերածուին Քրիստոսի Մարմնոյն եւ Արեան՝ հետեւելով միշտ Վերջին Ընթրիքի պատուերին ու չմոռնալով որ Սբ. Սեղանը նոյն ինքն Քրիստոսի Խաչն է, որուն վրայ իր սուրբ արիւնը թափեց:

Մասպովանանքը նախապայման է Սբ. Հաղորդութիւն սրանալու համար...

ՅԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ

Սբ. Հաղորդութեան մատակարարումէն առաջ, պատարագիչ քահանան եւ սարկաւագները անցեալի առաջնորդող դէմքերը անուններով կամ խմբովին կը յիշատակեն՝ Հին եւ Նոր Կտակարաններէն, ինչպէս նահապետները, մարգարէներն ու առաքեալները, եկեղեցւոյ հիմնադիրներն ու սուրբերը, յանգելու համար Յիսուսի Քրիստոսի եւ իր փրկչարար ներկայութեան՝ որպէս Մեսիան եւ Աստուծոյ Միածին Որդին: Կը յիշուի նաեւ Հայ Եկեղեցւոյ գերագոյն պետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին անունը, աղօթելով անոր կեանքին ու առաքելութեան համար: Կը